

## ԳԱԲՐԻԵԼԱ. ՌԱԼՈՒՀՈՃԵԱՆ

### ՀԱՂՈՐԴՈՒՄ ԻՏԱՎԻՍՅՈՒՄ (ՌԵԶՋԻՌ ԷՄԻԼԻԱ. Ք.) ՆՈՐ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԱԾ ԵՐԿՈՒ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեծ յուգումով է, որ մասնակցում եմ նոր Մատենադարանի բացման օրը այս միջազգային գիտաժողովին, հին և պատմական Մատենադարան իմ առաջին մուտքի ճիշտ քառասուն տարուց յետոյ: Եւ այս ուրախալի դէպքում չեմ կարող յիշողութեամբ չ'երթալ այսքան երկար ժամանակի ընթացքում ծանօթացած բազմաթիւ անձերին, որոնք այսօր մեզ հետ չեն: Բոլորն էլ ինձ մի բան նուիրեցին, մէկը՝ գիտական ուղղութիւն, մէկը՝ խորհուրդ, մէկը՝ ժպիտ, մէկը՝ մանուշակ, մէկը՝ ամէնօրեայ պարագաներում գործնական օգնութիւն: Բոլորին եմ յիշում երախտագիտութեամբ և նրանց վառ յիշատակին ընծայում եմ այսօրուայ իմ խօսքը:

Երկու ձեռագրերը, որ այժմ առաջին անգամ ներկայացնում եմ հանրային, նոր յայտնաբերուեցին, երբ իտալիայի գրադարններում գտնուող հայերէն ձեռագրերի իմ ցուցակը<sup>1</sup> արդէն լոյս տեսել էր. ուստի այս մատեանները նրանից դուրս մնացին:

Զարդարուած նոր ձեռագրեր՝ աւելի իրենց արուեստով ուշագրութիւն են յարուցում, մանաւանդ եթէ նրանց բովանդակութիւնը արդէն ծանօթ լինի, ինչպէս է մեր դէպքում, լինելով մէկը՝ Աւետարան և միւսը՝ Գիրք ձեռնադրութեան, թէկ բոլորս գիտենք որ միշտ բնագրային հետաքրքրական նոր տարբերակներ կարող են երեւան գալ: Սակայն մանրանկարները ուսումնասիրելը պահանջում է մասնագիտական խորացում, ընդհանուր հայկական մանրանկարչութեան զանազան դպրոցների լոյսի տակ: Սրա համար ներկայ առիթով, աւելի նպաստաւոր համարում եմ առաջին հերթին նրանց պատմական արժեքի մասին տեղեկութիւն տալ:

Զեռագրերը պահպանուած էն իտալիայի Խեցիո Էմիլիա քաղաքում՝ Կապուչինիների թանգարանի մէջ, ուր հասել են 1915 թ., երբ այն հոգեւորական-ներ լքեցին Անատոլիայի իրենց առաքելավայրերը: Սրանք ուրեմն փրկուած ձեռագրեր են և իսկ այս պատճառով՝ թանկագին են մեզ համար, իբրեւ մեր պատմութեան բեկորներ: Երկուսն էլ վերանորոգման կարիք ունեն:

#### Գլո. 1 Աւետարան

[ԺԵ դ.], Կեղի, գրիչ՝ Երեմիա սարկաւագ, ստացող՝ Մատթէոս<sup>2</sup>, թերթ՝

<sup>1</sup> Si è un Catalogo dei manoscritti armeni delle biblioteche d'Italia, a cura di GABRIELLA ULUHOGIAN, "Indici e Cataloghi, Nuova serie, XX", Istituto Poligrafico e Zecca dello Stato, Roma, 2010

290, պրակ՝ 25, նիւթ՝ թուղթ, մեծութիւն՝ 23x16, գրութիւն՝ երկսիւն, զիր՝ բոլորգիր, տող՝ 19, կազմ՝ կաշեպատ, պատառիկ-պահպանակ՝ 1(սկ) +1(վշ) մագաղաք՝ Աւետ. (Մատքէոսի ԺԲ, 34-40 և ԺԵ, 9-15): Մանրանկարչութիւն՝ պատկեր՝ Քրիստոս փառաւորեալ, աւետարանիշների խորհրդանշաններ և հրեշտակներ՝ 2թ, եցն ի դժոխս՝ Յա, Մատքէոս՝ Յթ, Մարկոս՝ 81թ, Ղուկաս՝ 139թ, Յովհաննէս՝ 225թ, կիսախորան՝ 4ա, 82ա, 140ա, 226ա, լուսանցագարդեր, գլխատաներ: Յիշատակարան՝ 287թ, 288ա-289թ (գլխաւոր), 290ա-թ: Եւսեբիոսի թուղթ և խորաններ ընկել են: Հանգաման՝ բազմաթիւ թերթեր գործածութիւնից մաշած և որոշ տողեր անընթեռնելի են. տեղ տեղ երկրորդ մի ձեռք ամրացել է գունատ տողեր ու գրեր:

Բովանդակութիւն՝ Աւետարան:

1ա-2թ Սկիզբն գլխոց Մաթէոսի աւետարանշի:

թթ. 4ա-80ա Աւետարան ըստ Մատքէոսի:

թթ. 80թ-81ա Սկիզբն գլխոց Մարկոսի աւետարանշի:

թթ. 82ա-136ա Աւետարան ըստ Մարկոսի:

թթ. 136թ-138ա Սկիզբն գլխոց Աւետարանի Ղուկասու:

թթ. 138թ-139ա սպիտակ

թթ. 140ա-224թ Աւետարան ըստ Ղուկասու:

թ. 225ա-թ սպիտակ

թթ. 226ա-287թ Աւետարան ըստ Յոհաննու:

*Բազմաթիւ յիշատակարանների միջոցով կարող ենք բաւական լայնօրէն վերակառուցել ձեռագրի պատմութիւնը: Դիմաւոր յիշատակարանը նշում է գրչութեան տեղը և գրիշը<sup>2</sup>*

288ա՝ Փառք ամենայսուր երրորդութեանն՝ Հօր եւ Ռորոյ եւ Հոգայն սրբոյ, որոյ շնորհանքն աւարտեցաւ եռամիրազ եւ հոգիազարդ Աւետարանս, զոր է շաղկապեալ երանեալ աւետարանշացն, ըստ բազմերանգ գունոց ի մի ոստայնանգելով հանճար. Զոր արևստակենալ անուշողաց ծաղկանց իտղեցական կազմութեամբ, որ ըստ հոգոյն յատկութեան իմանի. զանազ<զ>ան <որ> որակութեամբ [գաղա]փարելով ըստ յոյնունց արփիացելոցն դասակցութեանց եւ ի յարմարումն եկեղեցոյ յարդի խաղաղութեան գլխոյն պատշաճեալ. զի յայսմանէ կատարելութեան չորս աւետարանի ի բազում պատճառ է [...]<sup>3</sup>: Եւ այլ բազում պատճառ են յորս գաղափարին շորեմեան աւետա-

<sup>2</sup> Յիշատակարանի սովորական կրնատումները լուծուած են: Օգտակործուած պայմանական նշաններ՝ ... անընթեռնելի, [...] կամաւոր ընդհատում, [ ] աւելում, < > բացառում: Շեղագիրը նշում է տարբեր ձեռքով կամ ուրիշ բանափով ամրացած տողեր:

<sup>3</sup> Համոզուած եմ, որ յիշատականները պէտք է ամրողութեամբ հրատարակել, որպէսզի նրանց բնագրերի ուսումնասիրութիւնը ամէն տեսակիտից կատարեալ լինի. շատ եւկար լինելով մեր՝ յարմար եմ համարում սողորադաս գրել այն մասը, որ սերտ կապ չ'ունի ձեռագրի պատմութեան հետ և վերաբերում է չորս բոլի խորհրդանշանական իմաստին. «Չորեմկերակեան կենդանիի՞ մարդ, առիւծ, եզն, արծիւ, չորս նիւթի՞ աշխարհիր?», հող եւ ջուր,

բանիս: Որոց ցանկացող եղեալ բարեպաշտ Քրիստոնէն Մատթէոսն<sup>4</sup> եւ ջանաց ստանալ զանառիկ մեծութիւնս եւ զգանձս անկողոպակի ի յիշատակ հոգոյ իւր եւ ծնողաց իւրոց Կի(289ա)րակոսին եւ մատն Շընքորին եւ կենակցին իւր Սառամելիքին եւ հարսին Կիրամելիքին: Եւ ես յտինս բանափրաց եւ տրուպս ի սարկաւագաց Երեմիա մեղսամած գծողս տեսի զեռափափարգ զւէր եւ զշան բարեմիտ Մատթէոսին, զոր ունէր հետ սուրբ Աւետարանիս, եւ ձեռնարկեալ գրեցի զուրբ Աւետարանս ընդ հովանեաւ սուրբ Սարգսի ի քաղաքս Կեղի. ի թվականուրեն ... ամին ի դառն ... ժամանակիս որ հարկապահանջ կու տանչէին գքրիստոնեաս եւ այլ բազում շարիս գործէին ընդ քրիստոնեայս եւ ոչ կարի համարձակ գրեր զուրբ Աւետարանս: Արդ՝ որք հանդիպիք սուրբ Աւետարանիս տեսութեամբ կամ ընդեռընլով կամ զաղափար առնելով ի պիտու աւրինակի, յիշեցիք ի Քրիստոս զստացող սորայ զբարեպաշտ .... ոնեան զմա... 289թ (առաջին սիմեակի շորս տող անընթեռնեկի են) նաեւ զմեղուցեալ գծողս Երեմիա եւ զծնողս իմ եւ այլ ամենայն արեան մերժաւորս մէր եւ զընկերայկիցն իմ զեսպար սարկաւագն, եւ ինքն արարիչն Աստուած յիշողացդ եւ յիշեցելոցդ ողորմեացի յիւր <իւր> միւս անգամ զալստեանն: Եւ արդ եղեւ աւարտումն սուրբ աւետարանիս ի թվ ... է... ժանանիս(՝) ... գրիս եւ ծա ... բուք

Ուրեմն գրիշը՝ Երեմիա սարկաւագ և գրչավայրը՝ Կեղի ծանօթ են, ուստի գլխաւորապէս մնում է թուականի հարցը ճշտել: Թ. 289ա՝ առաջին սիմեակի վերջին տողում գրիշը գրել է, կիսատ մնացած, թվակաւ բառը, լրացնելով յաջորդ սիմեակի առաջի տողում՝ նույթէ համառօտած վերջաւորութեամբ, բայց ճիշտ այդ անկիւնում, որտեղ գրուած էին թուականի նշանագրերը, թուղթը մաշած և ընկած է. նոյնը հանդիպում է յիշատակարանի վերջում: Բարեբախտաբար սոյն յիշատակարանը մեզ հնարաւորութիւն է տալիս լուծելու թուականի հարցը, որովհետեւ նրա յատուկ բանաձեւը կրկնում է համանման մէկ ուրիշ ծանօթ և թուակիր ձեռագրում, դարձեալ Երեմիա սարկաւագի կողմից Կեղիում ընդօրինակուած:

Վեցնենք նորից Թեջջիոյի ձեռագրի յիշատակարանի սկիզբը և մեզ հետաքրքրող շարունակութիւնը՝

Փառք ամենայսուր Երրորդութեանն՝ [...], որոյ շնորհաւմն աւարտեցաւ եռայերաջ եւ հոգիազարդ Աւետարանս, զոր է շաղկապեալ Երանեալ աւետարանչացն, ըստ բազմեամբ զունց ի մի ոստայնանգերով համնար [...] 288թ՝

այդ եւ հուր. թշնամիք անհաշտեկիք եւ սիրելիք անքակտեկիք: Զորս չորք գի անւան ամեն(288թ)այսուրը Երրորդութիւնն՝ Հայր, Արդի, Հոգի. չորս գետք բիւեալ ի դրախտէն՝ Փիսոն, Տիգրիս, Եւփրատէս (շորոնդը պակասում է - Գ. Աւ.): Զորք անկին եւ շորս եղջիւրք սեղանոյն: Զորք դիմք արքոյ խաչին: Զորս առաջինութիւնն հոգոյն՝ խոնեմորիին, արիութիւնն, ողջախոհութիւն եւ արդարութիւն: Զորս ծագ տիեզեաց՝ արեւելք, արեւմուտք, հիսիս եւ հարաւ: Զորս բանի խասի Աւետարանն՝ հրամանաւ, եւ խասով, աւրինակաւ եւ վկայութեամբ:»  
<sup>4</sup> Մատթէոսի անոնը այստեղ և յաջորդ յիշատակարանում տարբեր ձեռնով գրուած է շնչուած մի անուան փոխարէն, որ անընթեռնի է:

**Որ ցանկացող եղեալ բարեպաշտ քրիստոնէն Մատթէոսն<sup>5</sup> եւ ջանաց ստանալ զանառիկ մեծութիւնս եւ զգանձս անկողոպտեի ի յիշատակ հոգոյ իւրո եւ ծնողաց իւրոց.....**

**Համեմատենք այժմ այս տողերը մի ուրիշ ծեռագրի յիշատակարանի համապատասխան բաժնի հետ:** Այս երկրորդը, յ 1942, դարձեալ Աւետարան է, գրուած նոյնպէս Կեղիում, 1498թ. և ասում է՝

Փառք ամենասուրբ Երրորդութեանն՝ [...], որոյ շնորհաբն աւարտեցաւ Եռակացաւ և հոգիազար(թ)ք Աւետարանս, զոր է շաղկապեալ Երանեալ աւետարանշացն, ըստ բազմեանգ գունոց ի մի ոստայնանկեղով հանճար [...] Որոց ցանկացող Եղեալ բար/սկը և աստուածամբ կին մի Մարիամ ամուն, և ջանաց ստանալ զանառիկ մեծութիւնս. եւ զգանձս անկողոպտեի յիշատակ հոգոյ իւրո եւ ծնողաց իւրոց...<sup>6</sup>

Երկու ծեռագրերի գրիչը և գրչութեան տեղը նոյն են, նոյն է նաև յիշատակարանի յատուկ բանաձեւը, հետեւաբար եթէ մէկին թուականը 1498-ն է, միւսը, այսինքն Խեջջիոյինը պէտք է մօտաւորապէս նոյն շրջանին գրուած լինի, եզրակացութեամբ ժե դ. Երկրորդ կէսին: Այսպէս լուծուած եմ համարում թուարկութեան հարցը: Երկու յիշատակարաններումն էլ նշուած են նաև քաղաքի նոյն եկեղեցիները՝ Ս. Սարգիս, Ս. Յակոբ և Ս. Աստուծածին:

Աւելի կնճռուտ է ստացողի հարցը: Երդեօք վերոյիշեալ Մատթէոսն է, որի անունը սակայն ուրիշ տեղն էլ քերուած թուղթի վրայ տարբեր թանաքով գրուած է. արդեօք՝ Երկրորդ ստացողն է եղել: Ո՞վ էր առաջին բուն ստացողը: Եւ ո՞վ է ոմն Հայրապետ, որի անունը յիշատակում է յաջորդ յիշատակարանում Մատթէոսից յետոյ:

289թ, սիւն բ՝ Դարձեալ յիշեսչիք ի մաքրափայլ յաղաւրս ձեր զՄաքէոս եւ զծնողս իւր. յիշեցիք եւ զՀայրապետ հահանան եւ զհայրն իւր զՄտեփաննոս հահանան եւ զմայր իւր զՄարքար եւ զաւակս իւր զպատճառ եւ յորդորիշ եղեւ եւ գրել զանգին մարզարիտս եւ զանառիկ մեծութիւնս եւ տվալ ի ձեռն Հայրապետ հահանային յիշատակ իւր եւ ծնողաց և ամ[ենայն] արեան մերձաւորաց իւրոց ամէն:

Սրանով, ինչ որ եղել է այս Երկրորդ անձնաւորութեան գերը, ծեռագիրը կապում է Հայրապետ քահանայի տոհմի հետ, ինչպէս Երեւում է հետեւեալ տողերից, որտեղ կէս դարից յետոյ Մալաքիա մի գրիչը յիշատակում է Հայրապետի թոռան՝ տէր Մարգարէ արքեպիսկոպոսին իբրև ծեռագրի նորոգիշ և մէծ բարերար եղիի եկեղեցիների՝

<sup>5</sup> Տե՛ս ծանօթագր. 4:

<sup>6</sup> Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Եր., 1958, էջ 274-275.

290ա՝ Դարձեալ յիշեցիք ի մաքրափայլ յաղաւթ ձեր զշարապետ քահանաւ-յին թոռն. զուր Մարգարէ ամրեպիսկոպոսն, որ նման Ներսէս հայրապետին՝ շնորհաւեն զարդարեալ կայ, եւ զիայրն իւր Զեկիան և զմայրն իւր զթանկ-իսաբոն և զիաւեղբայրն իւր զիաշերեսն և զիարազատ եղբայրն իւր զպա-րոն Հայրապետն և զՄԵլքոն և զեյրն իւր զիանգուցեալն առ Քրիստոս։ Որ ես զուրբ Աւետարանս կրկին նորոգել եւ վերըսափն զարդարել եւ եղ յիշատակ ի դուռն սուրբ Կիրակոսին։ Եւ արդ, զիտացիք հայր եւ մայր, զի ոչ թէ զուրբ Աւետարանս միայն եղ յիշատակ, այլ և բազում յիշատակ եղեալ ունի սա ի սուրբ եկեղեցիք։ Նախ եւ առաջին ոսկի թեղով շուրջան մի բոլորովին զգես-տովն եւ սուրբ սեղնի ծածկոց մի եւ նըշիստի բափսի մի, նաղչոն ծածկո-ցով մի ի եղանակն վաճեն ունի եղեալ յիշատակ դարձեալ հաստիքայ շուրջան մի բոլորովին զգեստովն, եւ ծածկոց մի ի բաղրին միաբանեն ի սուրբ Յակոբն եղ յիշատակ ի ձեռն Աստուածայսուր աւագ իիցուն։ Դարձեալ զեղեցիկ նա-շոցք մի եւ Բ արծաթէ խաչ եւ ըսկին մի եւ զայս Աւետարանս եղիր յիշատակ ի սուրբ Կիրակոսն եւ ըսկին մի յասարդերդ եւ այլ բազում բարութիւնս արա-րեալ է եւ անբի գերիս ազատեալ է եւ առիթ շինեալ է։ Փառք և գոհութիւն Աստուծոյ, որ այսպիսի առաջնորդի տիրացեալ ենք մենք. Աստուած աւեհնէ զայն մարդն որ լի բերանով Աստուած ողորմե[ա] ասէ։

Դարձեալ յիշեցիք յաղաւթ ձեր զանպիան գրիչ զՄաղաքիայ երէցս, որ ա-նուամբ միայն կոչիմ քահանայ և զործովս ոչ և զկողակիցն իմ և ծնաւղսն իմ, և անմեղադիր լեռու խոշորութեան եւ զաղանաց սորայ, զի ի մեծութեան ժամանակս ուսայ եւ կար իմ այս է։ Դարձեալ յիշեցիք զվարպետն իմ զուր Գրիգորն որ բազում շանի եւ աշխատութեամբ ուսոյց զիս։ Եւ եթէ ո՛ք յանութեանի ի հետ սուրբ Աւետարանիս ծախեղով թէ զողանալով կամ գրաւելով ի դրանէ սուրբ Կիրակոսին, զմասն եւ զայսի մեջն Յուրաքանչ և զիսաշանա-նուացն առցէ. և Քրիստոսի փառք յափտեան։

*Ո՞վ է այս Մարգարէ արքեպիսկոպոսը, որ այսքան հարստութիւններ նուի-  
րեց կեղիի եկեղեցիներին։ Առ այժմ իմ փնտուտուքն ապարդին մնաց։ Ինչ որ  
կարելի է ասել վստահօրէն այն է, որ մեր ձեռագիրը իր համայնքի մէջ երկար  
կեանք ու խնամք է ունեցել. շատ օգտագործուած Աւետարան է եղել, եթէ իր  
գրչութեան մօտաւորապէս յիսուն-վաթսուն տարուց յետոյ, նորոգւուելու կա-  
րիք է ունեցել, ինչպէս կարգացում է նոյն յիշատակարանի վերջաւորութեան*

290բ՝ Արդ՝ կազմեցաւ Աւետարանս ի թվիս Հայոց ԶԴԴ ապրիլ ամսոյ ի ԻԶ ի  
բաղամս որ կոչի Կեղի, ընդ հովանեաւ սուրբ Յակոբին եւ սուրբ Սարգսին եւ  
սուրբ Աստուածածնին։ Ամէն. Հայր մեր յերկինս և սուրբ եղիցի անուն քո....

*Կազմութեան մասին՝ արդէն թ. 287բ իբրև կազմող յիշատակուած է նոյն  
Մաղաքիա գրիչը*

Զվերջին կազմաւղ սուրբ Աւետարանիս զիմում գրիչ զՄաղամիայ էրեց յիշեցիք ի Քրիստոս աղաշեմ զձեզ և որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոս:

**Զեռագրի յաջորդական կացութեան մասին լուր չ'ունենք, մինչեւ որ Առաքէլ ուն ապատեց ի "անպատեհ տեղի"ց՝ Տրապիզոնում, ըստ անթուական վերջին նոտրագիր յիշատակարանի՝**

թ. 290թ Այլ յիշեցիք զանարժան եւ զուտանուն սարգաւարք Առաքելս, որ վերջին ժամանակի ըստացայ զուրբ Աւետարանս ի Պոնտոս հաղամի որ կոչի Տրապիզոնն, ի յառն միոչէ, որ է ի դաւանակս Յունաց եւ ի գեղջէն որ<կոր> կոչի Մանկայ, տեսանելով զուրբ Աւետարանս ի անպատեհ տեղիս եւ ազատեցի, ինն յայտնեաց ինձ:

Վերջին էջում անշնորհ ձեռքով մի թուական գրուած է «թվ. ԽօծՌԹ յունիսի ...», որից յետոյ մեր ձեռագրի ճակատագիրն անծանօթ է մնացել մինչեւ իտալիայ հասնելը:

## Ձեռ. 2 Գիրք ձեռնադրութեան և պատարագի (Մաշտոց)

[ԺԴ դ.], [Կիլիկիա], գրիչ՝ անյայտ, ստացող՝ Ստեփանոս Եպսկ. Անազարքոյ, թերթ՝ 187, պրակ՝ 17, նիւթ՝ մազաղաթեա, մեծութիւն՝ 21,5x15, գրութիւն՝ միասին, գրի՝ բոլորգիր, տող՝ 16, կազմ՝ կաշեպատ, աստան՝ մետախսեայ սպիտակ և կապոյտ: Մանրանկարչութիւն՝ պատկեր՝ խոյրով եպիսկոպոս՝ 23թ, խորան՝ 3ա, կիսախորան՝ 23թ, 58թ, լուսանցազարդերի և զիսատառերի օրինակ՝ 6թ, 14ա, 18թ, 19ա, 32ա, 39թ, 128թ, 174թ, 182թ: Դժբախտաբար այս քանի առաջին ձեռագիրը ենթարկուել է վայրագ վերաբերմունքի. շգիտեմք ե՞րք, ո՞ր տգիտ կտրատել է նրա զարդեր. բողնելով միայն հետեւ սկզբնական նոխ զարդարանքի: Յամենայն դէպս մնացածը, թէև գրչութեան տեղը նշուած չէ, անտարակոյս ցոյց է տալիս որ ձեռագիրը կիլիկեան արուեստի արժեքաւոր նմոյշ է:

Մատեանի առաջին երկու թերթեր ուրիշ բնագրից անճատուած՝ պատեղ կցուած են. նիւթ՝ մագաղաթեա, մեծութիւն՝ 21,5x15, գրութիւն՝ երկսիւն, գիր՝ բոլորգիր, տող՝ 19, բովանդակութիւն՝ նոր կտակարանի հատուածներ, հաւանաբար Յակոմաւուրքից վերցրած:

Զերագրի բուն բովանդակութիւն՝ Գիրք ձեռնադրութեան և պատարագի (Մաշտոց).

թ. 3ա – Ձեռնադրութիւն անազանոսաց, որ են գրակարդաց: Զգենու եպիսկոպոսն և գայ ի դուռն

թ. 4ա Ձեռնադրութիւն կէս[ասարկա]ագաց: Սկսանին շարական....

թ. 8ա Կանոն յորժամ սամրկաւագաց] ձեռնադրեն: Զգենու եպիսկոպոսն և [քաջանայքն: Եւ առնու սարկ...

թ. 23թ Գեռնադրութիւն բահանայի: Ի ծունը իշուցանեն երկու ստամբ. Եւ ապա ասեն սաղմոս ի թիւ հիգ

թ. 47ա (թերթի կյանք կտրուած է)... էթ սրբութեամբ և աւրհնութեամբ զձեռս սորա. զամենայն ինչ զոր աւրհնէս սա...

թ. 48ա Կանովն վէմ աւրհնելոյ որ ի զուր ածի. Եւ երդումն աղի: Երդում-նեցուցանեմ զքեզ պատկեր աղի...

թթ. 58թ-113թ Սրբոյ հաւա մերոյ Արանասի է պատարագ, աւելին արկաներոյ սպաս եկեղեցւոյ: Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել....

թթ. 114ա-127թ (թերթի կէսից աւելի կտրուած է). [Կանովն հիմնարկիվ].  
... ժԲս անտաշս զոր ի գետոյն ... արինին և քահանան ընդ նմա սարկ/աւագ/ ... և դպիրք մոմեղինաւը լուցելովք...

թթ. 128ա-176ա Կանովն նաւակատեաց եկեղեցոյ աւրհնուրեան: Յերկոյին հսկումն լինի միաբան ուխտիւն մինչև ցառաւաւտն...»

թթ. 174ա-182ա Կանոն տեսան ընդառաջին: Յաւր Տեառն ընդարրաջին զգեստաւորի եպիսկոպոսն յերրորդ ժամ աւուրն....

թթ.182թ-186թ կանովն իսաշալուա առնել: Զոր իսաշ ... կոչեն. առ ի բժշկութիւն անասնոց...

թ. 186թ վերջ. Եւ մեր ընկալեալ զի՞յն՝ թեզ մատուցանեմք ամենակարար և ամենախնամ Տէր, որ ես ատիճնեալ գովեալ և բարեբանեալ և յամենեցունց երկրպագեալ... զի այժմ և միշտ և յափուեան յափուենից ամէն:

Զեռագրի երկու յիշատակարանները, թէև անթուական թոյլ են տաղիս հաստատել նրա ժամանակաշրջանն ու միջավայրը։ Արդէն տեսել էինք որ մնացած զարդերի ոճը ուղղում էր դէպի Կյլիկիա, այժմ ստացողի անունը փաստում է գրամալրը։

թ. 186թ Փառմ անըսկիզբնէին Հաւրի յէն ճնեալ անժամանակ Արդոյն և էակից և փառակից սուրբ Հոգույն, երեքան ձևատրութեան և միաստուածութեան այժմ և յամբաւ յափառէան. ամէն: Արդ՝ ես, անպիտան ծառա սուրբ Աստուածածնին՝ **Ստեփանոս թափսկոպս Անարզարոյ** ցանկացող եղա այս սուրբ մատենիս եւ ետու գրել ըգսա եւ զարդարել ոսկէզաւծ գրով եւ վայելու ծաղկամ, որ է Գիրք ձեռնադրութեան եւ պատարագի եւ ետու ըգսա զանձտայնարի Տիրամար Սուրբ Աստուածածնի ի յիշատակ ինձ եւ երախտաւրացն իմ աէր Մարտիրոսին եւ աէր Սերոբէի [...] զարմից իմոց և որ ո՛վ զամէնն...».

Ուրեմն պատովիրատուն՝ Ստեփանոս Անազարբյոց եպիսկոպոսն է. սա ծանօթ անձնաւորութիւն է, որ մասնակցեց այն Սսի ժողովին, որ Միսիթար Գոներցի կաթողիկոս գումարեց 1341թ. և զանազան պատճառներով տեղի ունեցաւ

միայն մի տարուց յետոյ՝ 1342թ.<sup>7</sup> եթէ ընդունենք որ այդ նոյն Ստեփանոս եպիսկոպոսն է, որ պատուիրել է անծանօթ մի գրչին ձեռագիրը, անհմաստ չէ մտածել որ նրա շարագրութիւնը եղել է ժԴ դ. կէսերին:

*Միւս յիշատակարանը վերանորոգման մասին է, նոյնպէս անթուական և անծանօթ գրչի՝*

թ. 187ա Յիշեցիք ի սուրբ եւ արժանաւոր յաղաքս ձեր զառաշնորդ սուրբ Փրկչի վանաց՝ զուէր Աստուածատուր կրանաւոր եւ զմկանէս վարդապետն, որ ետուն զսուրբ Մաշտոց, որ է Գիրք ձեռնադրութեան վերստին նորոգել եւ կազմել իւրեանց հոգոյն յիշատակ. Զնեզ աղաչամ՝ ով ընթերձաւիք, որ մէկ հայր մեղախ մի յիշել ի Տէր. ով որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոս Աստուծոյ մերոյ. Ամէն: Եւ է սայ յիշատակ ի դուռն սուրբ Փրկչին. ամէն. հայր մեր որ յերկ:

*Արանով իմանում ենք որ մատեանը, նորոգուելուց յետոյ (ոչ արհեստաւորի անունը, ոչ թուականը յիշատակուած չեն), շնորհիւ Աստուածատուր կրօնաւորի և Ովանէս վարդապետի նուիրուել է Ս. Փրկչի վանքին: Դժուար է բնորոշել որ Ս. Փրկչի մասին է խօսքը, քանի որ նոյն անունով բազմաթիւ են վանքերը տարբեր վայրերում և ժամանակաշրջաններում և Կիլիկիայում և այլուր:*

Թէև սկզբից բացառել եմ խորացնել մանրանկարչութեան ուսումնասիրութիւն, կ'ուզենայի աւելացնել միայն մի նկատողութիւն այն միակ պատկերի մասին որ մնացել է մատեանում: Թ. 23թ՝ քահանայի ձեռնադրութեան ծիսի սկիզբին նկարագրուած է մի եպիսկոպոսի պատկէրը. նրա խոյրը շատ մօտենում է լատինականին: Դա ևս կարող է նշանակել այն լատինական ազդեցութիւն, որ անտարակոյս լինում էր Կիլիկիայիում, 1341-1342թթ. Սսի ժողովի ժամանակին:

<sup>7</sup> Տե՛ս J. D. Mansi, *Sacrorum conciliorum nova et amplissima collectio*, հատ. 25 (*Concilium Armenorum, Anno 1342 celebratum, 1185-1270*) ժողովի մասնակցող արքիեպիսկոպոսների բառում յիշատակում է Stephanus Ananarsensis. Մանսիին ուղղում է նաև Մ. Օրմանեան, Հազգապատում, 1291 (սխալմամբ նշելով հատ. 30): Ճիշտ է Օրմանեանի նկատումը որ լատիներէն տառապարձուած անունները խարարուել են, սակայն Առանարսենու անուան տակ պէտք է անպայման տեսնել «Անազարքացի» զուգահետք. հայերէնի մէջ էլ այդ բաղամի անունը տառերակների ենթարկում է Անարզարա, Անազարք, Անավարզա են: Ստեփանոս եպիսկոպոսի մասին տե՛ս նաև Մ. Չամչեան, Պատմութիւն հայոց, Վենետիկ 1784-1786, Գ., 341: